են ամենը։ Այն տեղ են Սիբիրից փախած, դատաստանից փախած Երևանի աւազակ Թաթարները, որոնք յայտնապէս ծառայում են խաներին։ Այնտեղ է աւազակների բոյնը, որ պատճառում է Տաճկա—Հայաստանցոց աւերումն։ Ո՞ւր են Մանդանցոց*) մօտ չորս հարիւր տաւարները։ Եթէ Մագուայ խանը այդ յափշտակութեան չէ ղէկավարել, ի՞նչու համար խոստացել է հատուցումն անել։ Ո՞վ սպանել տուեց Բաղիշեցի երկու վաճառականներին։ Խաները այժմ նոր գիւղեր են առնում, այդ սպանված Բաղիշեցոց փողովն է։ Այս ամենով ես կամենում եմ ապացուցանել, որ քրդերը չարագործ ձեռներում միմիայն գործիքներ են. կտրեցէք այդ ձեռները և քրդերը կը մնան հայերի՞ մշտենջենաւոր բարեկամները։ Բայց հայերը—աւե-

---

*) Մանդան վասպուրականում մի գիւղ է, որը 1881-ին Մագուայ քրդերը կողոպտեցին եւ տարան նոցա չորս հարիւր գլուխ տաւարը։ Կառաւարչական դրագրութիւններից յետոյ Թամիզ աղան խոստացել էր գիւղացոց բաւականութիւն տալ։ Նոյ տեսայ տասն եւ չորս Մանդանցի հայերին, որոնք տասն եւ հինգ օր էր, որ սպասում էին խանի վերադարձին։ Խանը դուրս էր եկել իւր կալուածները վերատեսչելու։ Ոչ ոք չէր համարձակվում այդ անհաճոյ հիւրերին խանի տեղը ցոյց տալու եւ առաջնորդելու։ Խեղճերը երկար սպասելուց յուսահատված դատարկ վերադարձան։